ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՇՊՀ), ի դեմս ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Երվանդ Մերոբյանի, ով գործում է ՇՊՀ Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Փոլիսինեթ» գիտահետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս համահիմնադիր, նախագահ Վիկտորյա Մելքոնյանի, ով գործում է Կազմակերպության Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության հնարավոր ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2.Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակում և իրականացում,

բ/ ներքին և արտաքին շահառուների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,

գ/ համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում,

դ/ Կողմերի շահառուների պրակտիկաների փոխադարձ կազմակերպում,

ե/ համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,

գ/ Կողմերի իրականացրած այլ կրթական, գիտական, մշակութային ծրագրերին, կազմակերպած միջոցառումներին մասնակցություն:

Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

3. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

3.1. Հուշագիրը բաղկացած է 2 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
3.2. Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով:
3.3.Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
3.4. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1.Հուշագիրը կնքվում է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակով և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:
4.2.Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

5. Կողմերի իրավաբանական հասցեները

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

Հասցե՝ ք. Գյումրի, փ. Պ. Սևակի-4
Էլ. Հասցե՝ info@shsu.am
Հեռ.՝ +374 312 6 94 94

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝ Երվանդ Սերոբյան

Կ.Տ.

«15» դեկտեմբերի 2021թ.

«Փոլիսինետ» գիտահետազոտական կենտրոն հասարակական կազմակերպություն

Հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փ. 11/4, 67
Էլ. Հասցե՝ info@poliscinet.com
Հեռ.՝ +374 41 091313

Համահիմնադիր, նախագահ՝ Վիկտորյա Մելքոնյան

Կ.Տ.

«15» դեկտեմբերի 2021թ.